

**ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ**

|                                             |                                                                                                          |
|---------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------|
| Կոդ TRM15-0004-06/4 PUB                     | Խմբագրություն 23                                                                                         |
| Կազմեց                                      | Հաստատված                                                                                                |
| Բիզնես գործընթացների կառավարման բաժին       | Վարչության 24/01/2022 թ. թիվ 03 արձանագրությամբ<br><br>Վարչության նախագահ՝<br><br>Կարեն Եղիազարյան _____ |
| Կիրառման ոլորտ                              | Ժամկետային ավանդների ներգրավման գործընթացում ներգրավված կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ:    |
| Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում | Մանրաձախ գործառնությունների վարչություն                                                                  |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ                    | 01/02/2022թ.                                                                                             |
| Ուժը կորցնելու ամսաթիվ                      |                                                                                                          |

**1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ) ժամկետային ավանդների (այսուհետ՝ Ավանդ) ներգրավում:
- 1.2. Ավանդները ներգրավվում են՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով:
- 1.3. Ավանդներն ընդունվում են ինչպես կանխիկ այնպես էլ անկանխիկ եղանակով: Ավանդների դիմաց հաշվեգրվող տոկոսագումարների վճարումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:
- 1.4. Ֆիզիկական անձ հաճախորդի կողմից Ավանդի ներդրումը ձևակերպվում է Բանկի կողմից սահմանված ձևի Հայտ-պայմանագիրը ստորագրելով և/կամ էլեկտրոնային հայտ ներկայացնելով: Հայտ-պայմանագրում/էլ. հայտում նշվում է Ավանդի տեսակը, գումարը, արժույթը, ժամկետը, տոկոսադրույքը և ըստ անհրաժեշտության այլ պայմաններ:
- 1.5. Ֆիզիկական անձ հանդիսացող Ավանդատուների ավանդները երաշխավորվում են համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի: Երաշխավորված ավանդների չափերի վերաբերյալ Հաճախորդները կարող են ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում, Ավանդների տեղեկատվական ամփոփագրում, ինչպես նաև Ավանդ ներդնելու դեպքում վերջինիս տրամադրվող ծանուցման միջոցով:
- 1.6. Ավանդի գումարի վերադարձը կատարվում է Ավանդի պայմանագրի վերջին օրը, իսկ եթե տվյալ օրը ոչ աշխատանքային է, ապա հաջորդ աշխատանքային օրը:
- 1.7. Հաշվեգրված տոկոսների վճարումը իրականացվում է համաձայն Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում/Պայմանագրում նշված տոկոսների վճարման պարբերականության:
- 1.8. Ավանդների հետ կապված կանխիկ գործառնությունների միջնորդավճարները սահմանվում են Բանկի «Սակագներով և դրույքներով» (TRM14-0002-02/1)-ով սահմանված դրամարկղային գործառնությունների սակագներով, բացառությամբ ՌԴ ռուբլով ավանդների:
  - 1.8.1. Կանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը վերադարձվում է կանխիկ ՌԴ ռուբլով, իսկ անկանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը վերադարձվում է անկանխիկ ՌԴ ռուբլով՝ առանց միջնորդավճարների գանձման:
  - 1.8.2. Անկանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը կանխիկ ՌԴ ռուբլով վերադարձնելու դեպքում գանձվում է վերադարձման օրը ՌԴ ռուբլու կանխիկացման համար սահմանված միջնորդավճարը:
  - 1.8.3. Կանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը անկանխիկ ՌԴ ռուբլով վերադարձնելու դեպքում գանձվում է վերադարձման օրը կանխիկ ՌԴ ռուբլու մուտքագրման համար սահմանված միջնորդավճարը:
- 1.9. Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսագումարները ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, ինչպես նաև ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով վճարման օրը տվյալ արտարժույթի համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ առքի փոխարժեքը:
- 1.10. 25,000,000 ՀՀ դրամից, 50,000 ԱՄՆ դոլարից, 40,000 Եվրոյից և 3,000,000 ՌԴ ռուբլուց ավել գումար ներդնելու դեպքում սահմանվում են պայմանագրային տոկոսադրույքներ:
- 1.11. Ավանդատուն կարող է իր ներդրված ավանդի 90% չափով ստանալ վարկ կամ օվերդրաֆտ՝ իր ժամկետային ավանդի ապահովվածությամբ: Վարկը կամ օվերդրաֆտը տրամադրվում է ներդրված ավանդի արժույթով՝ ավանդի տոկոսադրույք գումարած 2 % տարեկան տոկոսադրույքով: Վարկը կամ օվերդրաֆտը պետք է ամբողջությամբ մարվի մինչև ժամկետային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտը:
- 1.12. Բանկում ռեսուրսների ներգրավման արդյունավետությունից և Բանկի և հաճախորդի փոխհարաբերություններից ելնելով՝ Բանկը կարող է ներգրավել սույն պայմաններից և սակագներից շեղումով ժամկետային ավանդները:

Սույն պայմաններից և սակագներից կարող են իրականացվել հետևյալ շեղումները.

  - 1) Ավանդի գումարի մասնակի նվազեցում առանց վաղաժամկետ տույժի կիրառման (առանց պայմանագրի դադարեցման, պահպանելով գործող տոկոսադրույքները),
  - 2) «Էվոկա Online» ավանդատեսակի տոկոսադրույքի կիրառում «Դասական» ավանդ ձևակերպելիս (Բանկի գործունեության վայրում)
  - 3) Ավանդի համալրման հնարավորության տրամադրում առանց համալրման նվազագույն շեմի և քանակի,
  - 4) Ավանդի տոկոսադրույքի շեղում գործող հրապարակային տոկոսադրույքից +1 % (ներառյալ «Էվոկա Online» ավանդատեսակը):

Նշված շեղումով ժամկետային ավանդների ներգրավումը հաստատելու իրավասություն ունեն Բանկում առաջին կարգի ստորագրություն ունեցող անձինք: Շեղումներով ժամկետային ավանդների ներգրավման

դեպքում, կողմերի իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերի (ավանդային պայմանագրեր, համաձայնագրեր հայտ-պայմանագրեր և այլն) ստորագրման իրավասությունը պատկանում է բացառապես Բանկում առաջին կարգի ստորագրություն ունեցող անձանց:

## 2. Բանկի կողմից ընդունվող Ավանդների տեսակները և պայմանները՝

### 2.1. Ավանդ «Դասական»՝ տոկոսագումարները ժամկետի վերջում վճարմամբ

| Ներգրավող գումարների սահմանաչափեր ըստ արժույթի | Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների |              |             |              |               |
|------------------------------------------------|-------------------------------------|--------------|-------------|--------------|---------------|
|                                                | 91 - 180 օր                         | 181 - 365 օր | 366 -545 օր | 546 - 730 օր | 731 - 1095 օր |
| 200,000 - 25,000,000 ՀՀ դրամ                   | 6 %                                 | 8 %          | 9.5 %       | 10 %         | 10.5 %        |
| 500 - 50,000 ԱՄՆ դոլար                         | 2 %                                 | 3 %          | 4 %         | 4.5 %        | 5 %           |
| 500 - 40,000 Եվրո                              | 1 %                                 | 1.5 %        | 2 %         | 2.5 %        | 3 %           |
| 30,000 - 3,000,000 ՌԴ ռուբլի                   | 5 %                                 | 5.5 %        | 6 %         | -            | -             |

- 2.1.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, ինչպես Բանկի գործունեության վայրում, այնպես էլ՝ «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով:
- 2.1.2. Տոկոսագումարների պարբերաբար (ամենամսյա, եռամսյակային, կիսամյակային, տարեկան) վճարման դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով պակաս տոկոսադրույք:
- 2.1.3. Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը սկսած նվազագույնը 200.000 ՀՀ դրամից, 500 ԱՄՆ դոլարից, 500 Եվրոյից կամ 30,000 ՌԴ ռուբլուց: Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով պակաս տոկոսադրույք: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել Ավանդի ներդրման սկզբնական գումարը: Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:
- 2.1.4. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:
- 2.1.5. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու դեպքում Բանկն իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ դրույքաչափերով՝

| Ավանդի արժույթ | Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների |               |
|----------------|-------------------------------------|---------------|
|                | Մինչև 365 օր                        | 366 - 1095 օր |
| ՀՀ դրամ        | 0.5 %                               | 8.5 %         |
| ԱՄՆ դոլար      | 0.1 %                               | 3.5 %         |
| Եվրո           | 0.1 %                               | 1.5 %         |
| ՌԴ ռուբլի      | 0.1 %                               | 5 %           |

### 2.2. Ավանդ «Մանկական»

| Ներգրավող գումարների սահմանաչափեր ըստ արժույթի | Տարեկան տոկոսադրույք |
|------------------------------------------------|----------------------|
| 100,000 - 25,000,000 ՀՀ դրամ                   | 9.5 %                |
| 250 - 50,000 ԱՄՆ դոլար                         | 4.5 %                |

- 2.2.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից, հոգուտ երեխաների Ավանդ ներդնելու պայմանով՝ 2 տարուց մինչև երեխայի 18 տարին լրանալը:
- 2.2.2. Որպես ավանդատու կարող են հանդես գալ ինչպես երեխաների օրինական ներկայացուցիչները (ծնողները, խնամակալները), այնպես էլ երրորդ անձիք:
- 2.2.3. Տոկոսագումարների վճարումը կամ կապիտալացումը իրականացվում է ամենամսյա պարբերականությամբ:
- 2.2.4. Ավանդը կարող է համալրվել (ավելացվել)՝ սկսած նվազագույնը 40,000 ՀՀ դրամից կամ 100 ԱՄՆ դոլարից: Մեկ ամսվա ընթացքում համալրումների ընդհանուր գումարը 5,000,000 ՀՀ դրամը կամ 10,000 ԱՄՆ դոլարը գերազանցելու դեպքում անհրաժեշտ է Բանկի Վարչության որոշումը:

Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

- 2.2.5. Հօգուտ երեխաների բացված ժամկետային ավանդները տնօրինվում են երեխայի օրինական ներկայացուցիչների կամ երրորդ անձանց կողմից, օրենքով նախատեսված դեպքերում մինչև երեխայի 18 տարին լրանալը:
- 2.2.6. Կնքման օրից սկսած 2 տարվա ընթացքում պայմանագիրը դադարեցնելու դեպքում իրականացվում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ << դրամ 0.5%, ԱՄՆ դոլար 0.1% տարեկան տոկոսադրույքով:  
2 տարին լրանալուց հետո պահպանվում են մինչև վերջին կապիտալացումը (վճարումը) հաշվարկված տոկոսագումարները, իսկ կապիտալացումից (վճարումից) հետո ընկած ժամանակահատվածի համար կատարվում է տոկոսագումարների վերահաշվարկ << դրամ 0.5%, ԱՄՆ դոլար 0.1% տարեկան տոկոսադրույքով:
- 2.2.7. Պայմանագրի կնքման օրվանից 2 տարի հետո և այնուհետև յուրաքանչյուր հաջորդ տարի Ավանդի տոկոսադրույքը վերանայվում է՝ հիմք ընդունելով վերանայման պահին Բանկում գործող «Դասական» Ավանդատեսակի 366 օր ժամկետի համար սահմանված համապատասխան արժույթի տոկոսադրույքը:
- 2.2.8. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

### 2.3. Ավանդ «Էվոկա Online»՝ տոկոսագումարները ժամկետի վերջում վճարմամբ

| Ներգրավող գումարների սահմանաչափեր ըստ արժույթի | Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների |              |              |              |               |
|------------------------------------------------|-------------------------------------|--------------|--------------|--------------|---------------|
|                                                | 91 - 180 օր                         | 181 - 365 օր | 366 - 545 օր | 546 - 730 օր | 731 - 1095 օր |
| 100,000 - 25,000,000 ՀՀ դրամ                   | 6 %                                 | 8 %          | 9.75 %       | 10.25 %      | 10.75 %       |
| 200 - 50,000 ԱՄՆ դոլար                         | 2 %                                 | 3 %          | 4.25 %       | 4.75%        | 5.25 %        |
| 200 - 40,000 Եվրո                              | 1 %                                 | 1.5 %        | 2.25 %       | 2.75 %       | 3.25 %        |
| 30,000 - 3,000,000 ՌԴ ռուբլի                   | 5 %                                 | 5.5 %        | 6 %          | -            | -             |

- 2.3.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից **բացառապես** «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով:
- 2.3.2. Տոկոսագումարների պարբերաբար (ամենամսյա, եռամսյակային, կիսամյակային, տարեկան) վճարման դեպքում << դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով պակաս տոկոսադրույք:
- 2.3.3. Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում << դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով պակաս տոկոսադրույք: Տվյալ դեպքում ավանդի համալրումները իրականացվում են **բացառապես** «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով: Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը՝ առանց համալրվող գումարի նվազագույն սահմանափակման: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել՝
- << դրամի դեպքում Ավանդի ներդրման սկզբնական գումարի կրկնապատիկը,
  - ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու դեպքում Ավանդի ներդրման սկզբնական գումարը:
- Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:
- 2.3.4. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:
- 2.3.5. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու դեպքում Բանկն իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ դրույքաչափերով՝

| Ավանդի արժույթ | Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների |               |
|----------------|-------------------------------------|---------------|
|                | Մինչև 365 օր                        | 366 - 1095 օր |
| << դրամ        | 0.5 %                               | 8.5 %         |
| ԱՄՆ դոլար      | 0.1 %                               | 3.5 %         |
| Եվրո           | 0.1 %                               | 1.5 %         |

ՌԴ ռուբլի

0.1 %

5 %

#### 2.4. Ավանդ «Սիմֆոնիկ»՝ տոկոսագումարները ժամկետի վերջում վճարմամբ.

| Ներգրավող գումարի<br>չափ     | Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների |              |             |              |               |
|------------------------------|-------------------------------------|--------------|-------------|--------------|---------------|
|                              | 91 - 180 օր                         | 181 - 365 օր | 366 -545 օր | 546 - 730 օր | 731 - 1095 օր |
| 200,000 - 25,000,000 ՀՀ դրամ | 6.25 %                              | 8.25 %       | 9.75 %      | 10.25 %      | 10.75 %       |
| 500 - 50,000 ԱՄՆ դոլար       | 2.25 %                              | 3.25 %       | 4.25 %      | 4.75 %       | 5.25 %        |
| 500 - 40,000 Եվրո            | 1.25 %                              | 1.75 %       | 2.25 %      | 2.75 %       | 3.25 %        |
| 30,000 - 3,000,000 ՌԴ ռուբլի | 5.25 %                              | 5.75 %       | 6.25 %      | -            | -             |

2.4.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ Բանկի գործունեության վայրերում:

2.4.2. Այն հաճախորդները, ովքեր կներդնեն «Սիմֆոնիկ» ավանդ, պարտավորվում են ավանդից ստացվելիք տոկոսից նվազագույնը 0.25% տոկոսային կետի չափով գումար՝ որպես աջակցություն, փոխանցել «Հայաստանի պետական Սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամ»-ի հաշվեհամարին:

2.4.3. Տոկոսագումարների պարբերաբար (ամենամսյա, եռամսյակային, կիսամսյակային, տարեկան) վճարման դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5%-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25%-ով պակաս տոկոսադրույք:

2.4.4. Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը՝ սկսած նվազագույնը 200,000 ՀՀ դրամից, 500 ԱՄՆ դոլարից, 500 Եվրոյից կամ 30,000 ՌԴ ռուբլուց:

Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5%-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոհիշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25%-ով պակաս տոկոսադրույք: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել Ավանդի ներդրման սկզբնական գումարը: Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

2.4.5. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

2.4.6. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու դեպքում Բանկն իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ («Հայաստանի պետական Սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամ»-ին փոխանցված տոկոսագումարը մնում է անփոփոխ) հետևյալ դրույքաչափերով՝

| Ավանդի արժույթ | Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների |               |
|----------------|-------------------------------------|---------------|
|                | Մինչև 365 օր                        | 366 - 1095 օր |
| ՀՀ դրամ        | 0.5 %                               | 8.5 %         |
| ԱՄՆ դոլար      | 0.1 %                               | 3.5 %         |
| Եվրո           | 0.1 %                               | 1.5 %         |
| ՌԴ ռուբլի      | 0.1 %                               | 5 %           |

### 3. Լրացուցիչ պայմաններ

3.1. Ավանդատուի ցանկության դեպքում, Բանկը կարող է տրամադրել վճարային քարտ առանց տարեկան սպասարկման վճարի գանձման:

3.2. Տրամադրվող վճարային քարտի տեսակները, ըստ ներդրվող ավանդի գումարի սահմանվում է ստորև.

#### 3.2.1. «Դասական», «Էվոկա Online» և «Մանկական» ավանդատեսակների դեպքում

| Ավանդի արժույթ/<br>Քարտի տեսակ | MasterCard Standart/ Visa<br>Classic | MasterCard Gold/Visa<br>Gold | VISA Infinite     |
|--------------------------------|--------------------------------------|------------------------------|-------------------|
| ՀՀ դրամ                        | 500,000 – 25,000,000                 | 25,000,001 – 50,000,000      | 50,000,001 և ավել |
| ԱՄՆ դոլար                      | 1,000 – 50,000                       | 50,001 – 100,000             | 100,001 և ավել    |
| Եվրո                           | 1,000 – 40,000                       | 40,001 – 100,000             | 100,001 և ավել    |

|           |                    |                       |                  |
|-----------|--------------------|-----------------------|------------------|
| ՌԴ ռուբլի | 60,000 – 3,000,000 | 3,000,001 – 7,000,000 | 7,000,001 և ավել |
|-----------|--------------------|-----------------------|------------------|

### 3.2.2. «Սիմֆոնիկ» ավանդատեսակի դեպքում

| Ավանդի արժույթ/<br>Քարտի տեսակ | Visa Classic         | Visa Gold               | VISA Infinite     |
|--------------------------------|----------------------|-------------------------|-------------------|
| ՀՀ դրամ                        | 500,000 – 25,000,000 | 25,000,001 – 50,000,000 | 50,000,001 և ավել |
| ԱՄՆ դոլար                      | 1,000 – 50,000       | 50,001 – 100,000        | 100,001 և ավել    |
| Եվրո                           | 1,000 – 40,000       | 40,001 – 100,000        | 100,001 և ավել    |
| ՌԴ ռուբլի                      | 60,000 – 3,000,000   | 3,000,001 – 7,000,000   | 7,000,001 և ավել  |

3.3. Ավանդի ժամկետը լրանալու կամ ավանդատուի կողմից Ավանդի պայմանագիրը ժամկետից շուտ դադարեցվելու դեպքում, Ավանդի ներդրման դիմաց տրամադրված վճարային քարտի սպասարկումը շարունակվում է իրականացվել առանց տարեկան սպասարկման վճարի գանձման, մինչև վճարային քարտի սպասարկման ժամկետի ավարտը, բացառությամբ Ավանդի ներդրման դիմաց տրամադրված Visa Infinite վճարային քարտերի:

3.4. Visa Infinite վճարային քարտի քարտապանների կողմից Ավանդի պայմանագիրը ժամկետից շուտ դադարեցվելու կամ Ավանդի ժամկետը լրանալու դեպքում փակվում է նաև այդ Ավանդի ներդրման դիմաց տրամադրված Visa Infinite վճարային քարտը կամ հաճախորդի ցանկության դեպքում գործում է համաձայն տվյալ պահին Բանկում գործող սակագների և դրույքների: